

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԺՈՂՈՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ 6-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՑ ԱՌԱՋ

Հունգարական Եկեղեցիների Էկումենիկ Խորհրդի հրավերով, սույն թվականի մայիսի 13—17 օրերին տեղի է ունեցել Խաղաղության Քրիստոնեական Կոնֆերանսի Աշխատանքային կոմիտեի նախապատրաստական ժողովը Բուդապեշտում, Հունգարական վերակազմյալ Եկեղեցու Սինոդի շենքում: Ժողովը բացվել է Հունգարիայի Եկեղեցիների Էկումենիկ Խորհրդի նախագահ դոկտ. Տիբոր Բարտա եպիսկոպոսի կողմից կատարված պաշտամունքի կարճ արարողությամբ: Բացման արարողությանը ներկա են եղել ինչպես հիշյալ խորհրդի անդամ Եկեղեցիների, այնպես էլ Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու և հրեական համայնքների ներկայացուցիչները: Ժողովին մասնակցել են 21 երկրներից ժամանած ավելի քան 40 պատգամավորներ:

Հանուն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Ժողովի աշխատանքներին իր մասնակցությունն է բերել նաև Շիրակի թեմի առաջնորդ Տ. Նարեկ եպիսկոպոս Շաքարյանը:

Աշխատանքային կոմիտեի առաջնահերթ խնդիրն է եղել նախապատրաստությունը Խաղաղության Քրիստոնեական Կոնֆերանսի առաջիկա 6-րդ համագումարի, որը տեղի է ունենալու 1985 թ. հուլիսի 2—9 օրերին Պրագայում՝ «Աստված կոչում է՝ ընտրիր կյանքը. ժամանակն ուշ է» բնաբանով:

Ժողովում ԽՔԿ-ի գլխավոր քարտուղար դոկտ. Լյուբոմիր Միրեժովսկին իր հաշվետու վեկուցման մեջ ներկայացրել է 1984 թ. ապրիլին Հեռնհուդում (ԳԴՀ) գումարված Աշխատանքային կոմիտեի հերթական ժողովից ի վեր Խաղաղության Քրիստոնեական Կոնֆերանսի կատարած տարբեր բնույթի աշխատանքների (տեխնիկական, կազմակերպչական, ֆինանսական, հրատարակչական և այլն) համառոտ պատկերը: Գլխավոր քարտուղարն իր վեկուցման մեջ նշել է, որ աշխարհի բոլոր մայրցամաքների երկրների մեծ մասի ավելի քան 600 պատգամավորներ, որոնք մասնակցելու են ԽՔԿ-ի առաջիկա 6-րդ համագումարին, պատրաստակամություն են հայտնել իրենց կարողությունները ստեղծագործորեն և անմնացորդ կերպով տրամադրելու հօգուտ խաղաղության հաղթանակի, որը վերջ կտար աշխարհակործան միջուկային աղետին:

Սույն ժողովում նախագահական ուղերձով հանդես է եկել նաև Խաղաղության Քրիստոնեական Կոնֆերանսի նախագահ դոկտ. Կարոլի Տոթ եպիսկոպոսը: Իր ուղերձում նա հայտարարել է, որ համագումարի գլխավոր պարտականությունն է լինելու աստվածաբանական և էկումենիկ տեսանկյունից գնահատել աշխարհի ժամանակակից իրական կացությունը՝ հանդես բերելով քաղաքական և էկումենիկ խորաթափանցություն, աղոթել և պայքարել է՛լ ավելի կայուն խաղաղության համար, որը միայն կարող է առաջմղիչ ուժ հանդիսանալ մեր ապագա բոլոր գործունեությանց համար:

Չորսօրյա աշխատանքից հետո ժողովը հրապարակել է մի հաղորդագրություն և երկու այլ փաստաթղթեր՝ ա) «Սովը Աֆրիկայում» և բ) «Ֆաշիզմի լծից ազատագրվելու 40-ամյակը. ՄԱԿ-ի խաղաղասիրական գործունեության 40 տարին. քրիստոնյաների և Եկեղեցիների համագործակցության 40 տարին՝ ի խնդիր ժողովուրդների փոխըմբռնման և համերաշխության»:

Աշխատանքային կոմիտեի հերթական սույն ժողովն ավարտվել է ԽՔԿ-ի նախագահ դոկտ. Կարոլի Տոթ եպիսկոպոսի աղոթքով:

Մայիսի 16-ին, Համբարձման օրը, Հունգարական վերակազմյալ Եկեղեցու Սինոդի վարչական կենտրոնում տեղի է ունեցել կրոնական պաշտամունք, որին ներկա են եղել ժողովի մասնակիցները:

Նույն օրը ԽՔԿ-ի պատգամավորներին ընդունել է Հունգարիայի Ժողովրդական Հանրապետության նախագահության խորհրդի նախագահ Պալ Լոսոնչին:

Մայիսի 17-ի երեկոյան Հունգարական Եկեղեցիների Էկումենիկ Խորհուրդը Աշխատանքային կոմիտեի անդամների պատվին կազմակերպել է պաշտոնական ընդունելություն, որին, բացի հյուրերից, ներկա են եղել երկրի ինչպես եկեղեցական, այնպես էլ աշխարհական կազմակերպությունների ներկայացուցիչներ: